## ԱԶԳԱՑԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՑՈՑ ԹԵՄԻՆ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընդառաջելով Ատրպատականի Հայոց Թեմական Խորհրդի գրաւոր դիմումին, Իրանի Կայսերական Բարեխնամ Կառավարութեան «*ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿՈՄԻՏԷ*»ն իր թիւ 9, 1548 եւ 21, 4, 46 եւ թիւ 9, 1630 – 5, 5, 48 թուակիր գրութիւններով՝ ուղղուած Թեմական Խորհրդիս, յայտնում է որ Ս. Թադէի պատմական Վանքի հիմնաւոր նորոգութիւնները ներառուել են *ԻՐԱՆ – ԻՒՆԵՍՓՕ* միացեալ ծրագրի մէջ եւ Վանքի նորոգութեան ծախսերը ամբողջապէս պիտի հոգացուեն Իրանի Բարեխնամ Կառավարութեան *ՁՈՐԲՈՐԴ ԾՐԱԳՐԻ* բիւդջէից:

Նորոգութիւնների ծրագրի կազմութիւնը յանձնուած է Իւնեսփօ–ի մասնագէտներին, որպէսզի Թեհրանի համալսարանի գեղարուեստից ճիւղի մասնագէտների հետ համագործակցաբար պատրաստեն ծրագիրը:

Ուրախ ենք յայտնելու որ Իւնեսփօ–ի կողմից նշանակուած է հայ ճարտարապետ Պրն. Էդուարդ Իւթիւճեանը, որը միւս մասնագէտների ընկերակցութեամբ 1969 թուին երկու անգամ, Յուլիս 17–ին եւ Նոյեմբեր 13–ին այցելելով Ս. Թադէի պատմական Վանքը, ձեռնարկել է ուսումնասիրելու Վանքի հիմնական նորոգութիւնների ծրագիրը:

Տեղեկանալով այս գեղեցիկ ծրագրի մասին, յոյս ունենք որ Իրանի Բարեխնամ Կառավարութեան հոգատար վերաբերմունքի եւ Իրան–Իւնեսփօ մասնագէտների սրտցաւ համագործակցութեամբ հիմնաւորապէս նորոգութեան պիտի ենթարկուի Ս. Թադէի պատմական Վանքը:

Աշխատանքների ընթացքի մասին մամուլով տեղեակ պիտի պահենք մեր սիրելի հայրենակիցներին:

ԴԻՒԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ՀԱՑՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Թիւ 616–69
14 Նոյեմբեր 1969

digitised by A.R.A.R.@